

Դպրոցականների առարկայական օլիմպիադա

Հանրապետական փուլ

Հայոց լեզու-2015

9-րդ դասարան

1.Տեղադրե՛ք համապատասխան բառը (3 միավոր):

ա. Ոչ ոքի նա հանգիստ չէր (վերաբերել, վերաբերվել) կա՛մ սիրում էր, կա՛մ ատում:

բ. Հայացքս փախցրի նրանից և (ակնդետ, ակնկոր) գամվեցի տեղս:

գ. Օրբելին մեծ երկրպագուն էր ամեն գեղեցիկ բանի՝ (անստույգ, անըստգյուտ) բնության, գինարբուքների և այլն:

2. Մեջք և դուռ բառերով գրե՛ք մեկական դարձվածք և բացատրե՛ք իմաստները (2 միավոր):

3. Տրված շարքից առանձնացրե՛ք բազմիմաստ բառերը և նշե՛ք երկու իմաստ (2 միավոր):

կրոն, դուռ, ստեր, վանեցի, բերան, աստղ, բալ, հազար:

4. Տրված բառերի դիմաց գրե՛ք մեկական հոմանիշ (2 միավոր):

ճապաղ, իրազեկ, աղորիք, պարեխ:

5. Գծերի փոխարեն գրե՛ք այնպիսի գոյականներ, որ տրված բառերը ստանան փոխաբերական իմաստ (1 միավոր):

ճկուն _____, գորշ _____, փշոտ _____, վարդագույն _____:

6. Բացատրե՛ք << Աստուծո ծաղրն է աշխարհն ալ արդեն>> թևավոր խոսքի իմաստը և նշե՛ք՝ որտեղից է ծագում (3 միավոր):

7. Գրե՛ք երեք առած՝ արտահայտված միակազմ (անենթակա) նախադասությամբ (2 միավոր):

8. Շարադրություն՝ <<Արդար վճիռ>> վերնագրով (2 էջի սահմաններում) (5 միավոր):

Դպրոցականների առարկայական օլիմպիադա

Հանրապետական փուլ

Հայոց լեզու-2015

10-րդ դասարան

1. Տեղադրե՛ք համապատասխան բառը (3 միավոր):

ա. Այդ հոգեցունց (**զգացում, զգացմունք**) ունեցան Մինաս Ավետիսյանի բոլոր տարեց ընկեր - բարեկամները:

բ. Ծանոթներիցս մեկին հարցուփորձ արի՝ ինչ է անում, ինչ (**նորույթ, նորություն**) կան ընկերներից:

գ. Սփյուռքահայ մամուլում (**հրապարակվել, հրատարակվել**) էր Պիկասոյի նամակը՝ թարգմանված մի թերթից:

2. Տրված դարձվածքների իմաստներն արտահայտե՛ք մեկ բառով (2 միավոր):

աչքին երևալ, գլխից դուրս բերել, երկու խոսքով, ձեռքերը շփել:

3.Տրված շարքից առանձնացրե՛ք բազմիմաստ բառերը և նշե՛ք երկու իմաստ (2միավոր):

պապ, կողակից, սուրբ, թակարդ, գայլուկ, հազար, երես:

4. Տրված բառերի իմաստներն արտահայտե՛ք բառակապակցությամբ (2 միավոր):

գրգամոլ, մատակ, իմովսանն, հոլանի :

5. Գծերի փոխարեն գրե՛ք այնպիսի գոյականներ, որ տրված բառերը ստանան փոխաբերական իմաստ (1 միավոր):

լացկան _____, անուշ _____, պարզ _____, կնճռոտ _____:

6. Բացատրե՛ք <<Դե հե՛ր օրհնած, էտե՛ նց ասա, էդ բարկանա՞լդ էլ ինչիս ա>> թևավոր խոսքի իմաստը և նշե՛ք՝ որտեղից է ծագում (3 միավոր):

7. Գրե՛ք երեք առած՝ արտահայտված միակազմ (անենթակա) նախադասությամբ (2 միավոր):

8. Շարադրություն՝ <<Արդար վճիռ>> վերնագրով (2 էջի սահմաններում) (5 միավոր):

Հանրապետական օլիմպիադայի նախագահ՝

Գ. Խալաթյան

Դպրոցականների առարկայական օլիմպիադա

Հանրապետական փուլ

Հայոց լեզու-2015

11-րդ դասարան

1. Գտե՛ք սխալը, նշե՛ք տեսակը (3 միավոր):

ա. Իր մանկության տարիներին Րաֆֆին եղել է շատ ընդոստ և շատ սրամիտ:

բ. Սևաշղարշ մուրն արդեն կլանել էր քաղաքը իր շրջապատող լեռներով:

գ. Բայրոնը հիսուն պարապմունքից հետո իր ուսուցչի հետ սկսեցին թարգմանություններ անել:

2. Առանձնացրե՛ք այն բառերը, որոնք ունեն համանուններ, կազմե՛ք համանունների գույգ և բացատրե՛ք իմաստները (2 միավոր):

բարդ, խափշիկ, կանգուն, խոսեր, բարձր, խատուտիկ, գերի:

3. Գոյական + գոյական, ածական + գոյական, գոյական + բայ կադապարներով գրե՛ք մեկական դարձվածք և բացատրե՛ք իմաստները (2 միավոր):

4. Նշե՛ք՝ ինչ են նշանակում տրված շրջասությունները (2 միավոր):

հեղուկ հաց, կատուների թագուհի, չորրորդ իշխանություն:

5. Բացատրե՛ք «Հազիվ էի վագրը ձի շինել» թևավոր խոսքի իմաստը և նշե՛ք՝ որտեղից է ծագում (3 միավոր):

6. Տրված բառհոդվածները բառարանի ո՞ր տեսակներից են վերցված (1 միավոր):

1.ա. կրոն (չփոփոխված արմատ), գ. 1. պաշտամունք, հավատ, դավանանք, 2. կրոնական ուսմունք, վարդապետություն:

բ. կրոն (գերմ.՝ Kron), գ. դրամական միավոր եվրոպական մի քանի երկրներում:

2. ճոճանակ, ի. գ., 1. Հաստատուն կետից ամրացված և ծայրից ծանրություն կախված ճոճվող մետաղաձող:

7. Բացատրե՛ք ֆլորա բառի իմաստը և ծագումը (2 միավոր):

8. Շարադրություն՝ «Հուշերը պատմում են» վերնագրով (2 էջի սահմաններում) (5 միավոր):

Դպրոցականների առարկայական օլիմպիադա

Հանրապետական փուլ

Հայոց լեզու-2015

12-րդ դասարան

1. Գտե՛ք սխալը, նշե՛ք տեսակը (3 միավոր):

ա. Այս կամ այն ժողովրդի ներկան հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ նրա ասպնջական պատմությունը:

բ. Երկար տեղ այդ անակնկալ դադարը, մինչև որ նրա շուրթերին գծվեց աննկատ ժպիտ, ուրախություն:

գ. Պատանի նկարիչները ձեզ մոտից հեռացան զվարթ և լուսավոր դեմքերով:

2. Առանձնացրե՛ք այն բառերը, որոնք ունեն համանուններ, կազմե՛ք համանունների գույգ և բացատրե՛ք իմաստները (2 միավոր):

երես, աղբյուր, հեղգ, ճապաղ, նոթ, ծանր, անել:

3. Գոյական + գոյական, ածական + գոյական, գոյական + բայ կադապարներով գրե՛ք մեկական դարձվածք և բացատրե՛ք իմաստները (2 միավոր):

4. Տրված շրջասությունների դիմաց գրե՛ք համապատասխան հատուկ անունը (2 միավոր):

կախարդ ծերունի, հարյուր քանդակների քաղաք, յոթ իմաստունների զրուցակից:

5. Բացատրե՛ք <<Ծանր է Մոնոմախի գլխարկը>> թևավոր խոսքի իմաստը և նշե՛ք՝ որտեղից է ծագում (3 միավոր):

6. Տրված բառհոդվածները բառարանի ո՞ր տեսակներից են վերցված (1 միավոր):

ա. գերան հաշվել– անգործությունից չիմանալ ինչ անել, առաստաղի ճանճերը հաշվել:

բ. ջրաշուշան, ի. գ., ջրաշուշանագգիների ընտանիքին պատկանող ջրային բույս, ջրային շուշան:

7. Բացատրե՛ք պանթեոն բառի իմաստը և ծագումը (2 միավոր):

8. Շարադրություն՝ << Հուշերը պատմում են >> վերնագրով (2 էջի սահմաններում) (5 միավոր):

Հանրապետական օլիմպիադայի նախագահ՝

Գ. Խալաթյան

